ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 փետրվարի 2014 թվականի N 13-Ա

«ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014թ. փետրվարի 24-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1.Լևոն Սերգեյի Մանասյանին 2014թ. փետրվարի 27-ից նշանակել «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, ազատելով նրան տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014թ. փետրվարի 24-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը և եզրակացությունը, Լ. Մանասյանի անձնական դիմումը:

2. Լ. Մանասյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. փետրվարի 27
ք. Կապան